# ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
# ՆԱԽԱԳԱՀ

## ՀՐԱՄԱՆ

№ 135-Ա «25» 04 2024թ. ք.Երևան

### ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» № 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 7-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» № 30-Լ հրամանով հաստատված Հավելվածի 19-րդ կետի 11-րդ ենթակետով.

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը համաձայն հավելվածի:

4/25/2024

X

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Подписано: AVETISYAN ARNAK 1701920336 **ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

*Հավելված*

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
2024 թվականի «_25_» ապրիլի № _135_-Ա հրամանի

# ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

## ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

### 1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնի (այսուհետ՝ Բաժին) աշխատանքային ծավալի կտրուկ ավելացմամբ պայմանավորված՝ Բաժնի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթների (Կոմիտեի նախագահի և նրա տեղակալների հանդիպումների կազմակերպում, պաշտոնական կայքի նյութերի պատրաստում, հավաքագրում և տեղադրում, առցանց հայտարարությունների տեղադրում www.azdarar.am կայքում, պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով գրությունների ստացում և առաքում և այլն) իրականացման համար նպատակահարմար է ներգրավել համապատասխան մասնագետ (փորձագետ):

### 2. Փորձագետին ներկայացվող պահանջները

1) բարձրագույն կրթություն, հասարակայնության հետ կապերի բնագավառում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ,

2) «Տեղեկատվության ազատության մասին», «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին», «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքների անհրաժեշտ իմացություն,

3) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն,

4) գրավոր և բանավոր հաղորդակցության և հանրային խոսքի տիրապետման գերազանց հմտություններ,

5) ներկայացուցչական և կազմակերպչական գերազանց հմտություններ,

6) հայերենի գերազանց իմացություն,

7) անգլերենով և ռուսերենով ազատ հաղորդակցվելու ունակություն,

8) մեդիա տեխնոլոգիաների տիրապետում,

9) տեղեկատվական և ներկայացուցչական նյութեր պատրաստելու և համապատասխան ծրագրերի տիրապետման հմտություններ,

10) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը**

Փորձագետը ներգրավվում է մինչև մեկ տարի ժամկետով:

**4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը**

1) Փորձագետը մեկ տարվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

ա. քաղաքացիներին և իրավաբանական անձանց տեղեկատվության տրամադրում, հասարակության հետ կապերի ապահովում, բարձրացված հարցերի քննարկում, պարզաբանում և ուղղորդում,

բ. Կոմիտեի ստորաբաժանումների հետ համագործակցություն՝ լրատվական դաշտի, հասարակական սեկտորի, քաղաքացիների տեղեկատվական պահանջները բավարարելու նպատակով,

գ. ՀԼՄ-ների հետ բանակցությունների վարում, գործնական կապերի հաստատում և պահպանում, ինչպես նաև ՀԼՄ-ների կողմից ստացված հարցումների վերաբերյալ պատասխանների մշակում,

դ. լրատվական դաշտի մոնիթորինգի իրականացում և կազմակերպության վերաբերյալ հրապարակումների վերհանում, պարզաբանումների տրամադրում ըստ անհրաժեշտության,

ե. Կոմիտեի նախագահի և նրա տեղակալների հանդիպումների, ասուլիսների կազմակերպում,

զ. մամլո հաղորդագրությունների, հայտարարությունների պատրաստում և տարածում,

է. ելույթների և հարցազրույցների տեքստերի մշակում,

ը. սահիկաշարերի և գրաֆիկական նյութերի պատրաստում,

թ. Կոմիտեի կայքէջ/եր/ի և սոցիալական կայքերի հաշիվների վարում և առաջխաղացում,

ժ. Կոմիտեի արտաքին ներկայացուցչության ապահովման ռազմավարության մշակում և ռազմավարությամբ սահմանված միջոցառումների իրականացում,

ժա. նիստերի և խորհրդակցությունների նախապատրաստման աշխատանքների իրականացում, արձանագրությունների վարում և կազմում (ըստ անհրաժեշտության),

ժբ. Կոմիտեի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում պաշտոնական կայք-էջում՝ նորությունների տեղադրում, ինչպես նաև առկա տեղեկատվության թարմացման աշխատանքներ, արագ արձագանքում հարցադրումներին և հաղորդագրություններին,

ժգ. փորձի փոխանակման, պետական գույքի կառավարման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով՝ համագործակցություն այլ երկրների պետական գույքի կառավարման ոլորտը համակարգող գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ,

ժդ. առցանց հայտարարությունների տեղադրում www.azdarar.am ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում,

ժե. Բաժնի կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացում:

2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է դրական կամ բացասական:

**5. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետները**

Փորձագետը վեց ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություն:

**6. Աշխատանքի գնահատման չափանիշները**

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ վեց ամիսը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է վեց ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի «ա»-«ժե» ենթակետերով սահմանված արդյունքների:

Համապատասխանաբար, վերջնարդյունքների չափանիշներն են՝

ա. քաղաքացիներին և իրավաբանական անձանց տեղեկատվության տրամադրման, հասարակության հետ կապերի ապահովման, բարձրացված հարցերի քննարկման, պարզաբանման և ուղղորդմանն ուղված աշխատանքներն իրականացված են,

բ. Կոմիտեի ստորաբաժանումների հետ համագործակցություն՝ լրատվական դաշտի, հասարակական սեկտորի, քաղաքացիների տեղեկատվական պահանջները բավարարելու նպատակով աշխատանքներն իրականացված են,

գ. ՁԼՄ-ների հետ բանակցությունները վարվել են, գործնական կապերի հաստատվել և պահպանվել են, ինչպես նաև ՁԼՄ-ների կողմից ստացված հարցումների վերաբերյալ պատասխանները տրվել են,

դ. լրատվական դաշտի մոնիթորինիգն իրականացվել է և կազմակերպության վերաբերյալ հրապարակումները վերհանվել և տրամադրվել է պարզաբանումներ,

ե. Կոմիտեի նախագահի և նրա տեղակալների հանդիպումների, ասուլիսների կազմակերպման աշխատանքներն իրականացված են,

զ. մամլո հաղորդագրությունները, հայտարարությունները պատրաստվել և տարածվել են,

է. ելույթների և հարցազրույցների տեքստերը մշակվել են,

ը. սահիկաշարերն և գրաֆիկական նյութերը պատրաստվել են,

թ. Կոմիտեի կայքէջ/եր/ի և սոցիալական կայքերի հաշիվների վարվել են և առաջխաղացում է ապահովվել,

ժ. Կոմիտեի արտաքին ներկայացուցչության ապահովման ռազմավարության մշակվել և ռազմավարությամբ սահմանված միջոցառումներն իրականացվել են,

ժա. նիստերի և խորհրդակցությունների նախապատրաստման աշխատանքներն իրականացվել են, արձանագրությունները կազմվել են,